

## 2022թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


Հիմնվելով վերջին տարիների արդյունքների և շահութաբերության մակարդակի վրա՝ հեռանկարային զարգացման համատեքստում Բանկի առաջիկա տարիների գործունեությունը միտված է այնպիսի համակարգային միջոցառումների և տեխնոլոգիաների ներդրմանն ու զարգացմանը, որոնք հիմնարար և կայուն հիմքեր ու նախադրյալներ կստեղծեն Բանկի նոր որակական զարգացման համար:

Բանկը հաշվետու ժամանակաըջանում շարունակել է հաճախորդներին որակյալ ծառայությունների մատուցումը:

Անդրադառնալով հիմնական ֆինանսական ցուցանիշներին՝ նշենք, որ 2022 թվականին Բանկին հաջողվեց արձանագրել ակտիվների և պարտավորությունների աճ: Մասնավորապես,

- Բանկի ընդհանուր Ակտիվները նախորդ տարվա համեմատ աճել են 87 մլրդ դրամով կամ 23%-ով և կազմել 464 մլրդ դրամ:

#### ԱԿՏԻՎՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ




✓ Համախառն վարկային պորտֆելը կազմել է մոտ 230 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 10 մլրդ դրամով (4.22%-ով) և կազմել ընդհանուր ակտիվների 48%-ը, որից,

2022թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ


ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Անհատական վարկային պորտֆելը աճել է մոտ 8 մլրդ դրամով(6.4%-ով)
- Բիզնես վարկային պորտֆելը նվազել է մոտ 18 մլրդ դրամով(15.5%-ով)



• Տարեվերջին Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ տարվա համեմատ աճել են մոտ 75.4 մլրդ դրամով կամ 23.1%-ով և կազմել 401 մլրդ դրամ: Սա խոսում է Բանկի նկատմամբ հաճախորդների վստահության, վարվող ճկուն սակագնային քաղաքականության և մատուցվող ծառայությունների որակի մասին:


ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



2022թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ


✓ Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ հողվածը ավելացել է 80.4 մլրդ դրամով (30.7%-ով) և կազմել ընդհանուր պարտավորությունների 85.17%-ը:

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ, ՄԼՐԴ ԴՐԱՄ



• Սեփական կապիտալը նախորդ տարվա համեմատ աճել է 11.2 մլրդ դրամով կամ 21.7%-ով և կազմել 62.8 մլրդ դրամ:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



• 2022թ.-ին Բանկի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունները բնորոշել են նրա վճարունակության, իրացվելիության բարձր մակարդակը՝ վարկային և իրացվելիության ռիսկերին դիմակայելու մեծ պոտենցիալը: Հիմնական տնտեսական նորմատիվները ամբողջ

2022թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ


ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակաշրջանի ընթացքում եղել են 33 ԿԲ սահմանված նորմատիվների թույլատրելի մեծության սահմաններում :

### ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ


- Տարվա զուտ շահույթը կազմել է 14.1 մլրդ դրամ: Այն նախորդ տարվա համեմատ աճել է 242%-ով:

ԶՈՒՏ ԾԱՅՈՒՅԹԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Գործառնական շահույթը կազմել է մոտ 20 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 11.8 մլրդ դրամով կամ 145%-ով:

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԾԱՅՈՒՅԹԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Տոկոսային եկամուտները կազմել են 30.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 13.8%-ով:

## 2022թ. ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ

### ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

- Տոկոսային ծախսերը կազմել են 14.2 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 15.9%-ով:

ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Չուտ տոկոսային եկամուտները կազմել են մոտ 16.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցելով 12%-ով:

- Ոչ տոկոսային եկամուտները կազմել են 17.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 248.71%-ով՝ պայմանավորված հիմնականում զուտ առևտրային եկամտի աճով:

- Ոչ տոկոսային ծախսերը կազմել են մոտ 13.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 19.22%-ով:

ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, ՄԼՆ ԴՐԱՄ



- Չուտ մասհանումները կազմել են 2.1 մլրդ դրամ, նախորդ տարի նույն ցուցանիշը կազմել էր 2.8 մլրդ դրամ:
- Ծախս/Եկամուտ հարաբերակցությունը կազմել է 39.6%՝ նախորդ տարվա 57.9% ցուցանիշի դիմաց:

**Ռիսկերի կառավարումը**

Հայրենական և համաշխարհային տնտեսություններում տեղի ունեցող իրադարձությունները իրենց ազդեցությունն են թողնում Բանկի կողմից՝ թե՛ ներքին և թե՛ արտաքին շուկաներում իրականացվող գործունեության վրա: Օրըստօրե ավելանում են արտաքին աշխարհի մարտահրավերները, որոնց դիմակայելու համար Բանկը իրականացնում է ռիսկերի պարբերական մոնիտորինգ՝ մշակելով համապատասխան միջոցառումների ծրագրեր:

Սույն ֆինանսական հաշվետվություններին կից ներկայացվում է “Ռիսկի կառավարում” թիվ 30 ծանոթագրությունը, որում բացահայտված են Բանկի գործունեությանը բնորոշ հիմնական ռիսկերը և դրանց գնահատմանն և կառավարմանն ուղղված՝ Բանկի կողմից կիրառվող քաղաքականությունը:

Բանկի բաժնետերերը և ղեկավարությունը հավատարիմ են Բանկի հեռանկարային զարգացմանն ուղղված իրենց որդեգրած ուղուն. այն է Բանկի գործունեության շարունակական արդիականացում, սպասարկման ցանցի ընդլայնում և մատուցվող ծառայությունների որակի բարձացում:

Խորհրդի նախագահ՝

Արմեն Տեր-Տաճատյան

Խորհրդի անդամ՝

Արսեն Գամաղեյան